

Ա Ր Չ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
Երևանի պետական համալսարանի
Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի
2022 թ. դեկտեմբերի 9-ին կայացած թիվ 9 նիստի

Գիտական խորհրդի 38 անդամներից հարցմանը մասնակցել են 30-ը:

Օրակարգում՝

1. Կենսաբանության ֆակուլտետի հեռակա ասպիրանտների և հայցորդների տարեկան ատեստավորման հարցը:

ԼՍԵՑԻՆ՝ Կենսաբանության ֆակուլտետի հեռակա ուսուցմամբ ասպիրանտների և հայցորդների տարեկան ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի դեկան՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ. Է.Ս. Գևորգյանը: Համառոտ ներկայացվեց կենսաբանության ֆակուլտետի հեռակա ուսուցմամբ 8 ասպիրանտների և մեկ հայցորդի կողմից կատարած աշխատանքները:

ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոն

1. Չորրորդ տարվա հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Ռազմիկ Ռուբենի Սարգսյան (գիտական ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Հ.Հ. Փանոսյան): Հաշվետու ժամանակահատվածում պարտադիր դասընթացներից հավաքել է անհրաժեշտ կրեդիտների քանակը և տպագրել է 3 հոդված, 1 թեզիս, համահեղինակ է 1 գրքի գլխի:
2. Երկրորդ տարվա հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Գայանե Մխիթարի Հայրապետյան (գիտական ղեկավար՝ կ.գ.դ., պրոֆ. Կ.Ա. Թոչունյան): Պարտադիր դասընթացներից հավաքել է անհրաժեշտ կրեդիտների քանակի մի մասը, ուղարկվել է տպագրության 2 հոդված:
3. Առաջին տարվա հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Դիանա Համլետի Ղևոնդյան (գիտական ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Հ.Հ. Փանոսյան): Հաշվետու ժամանակահատվածում պարտադիր դասընթացներից հավաքել է 30 կրեդիտ, տպագրել է 3 թեզիս, համահեղինակ է 1 գրքի գլխի:

4. Առաջին տարվա հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Սոնա Հազարապետի Նիկոլյան (գիտական ղեկավար՝ կ.գ.դ., դոցենտ Ա. Ա. Փոլադյան): Հաշվետու ժամանակահատվածում պարտադիր դասընթացներից հավաքել է 26 կրեդիտ և տպագրել է 1 թեզիս:
5. Հայցորդ Ջենմա Գուրգենի Մանոյան (գիտական ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Լ. Ս. Գաբրիելյան): Հաշվետու ժամանակահատվածում պարտադիր դասընթացներից հավաքել է 33 կրեդիտ, տպագրել է 2 հոդված և 4 թեզիս:

Բուսաբանության և սնկաբանության ամբիոն

1. Չորրորդ տարվա հեռակա ուսուցման ասպիրանտ Տիգրան Ալեքսանդրի Եսայան (գիտական ղեկավար՝ բուսաբանության և սնկաբանության ամբիոնի վարիչ, կ.գ.դ., պրոֆեսոր Ս.Գ. Նանագյուլյան): Հավաքագրվել է հոդային 56 և բուսական մնացորդների 34 նմուշներ, որոնցից անջատվել է գիշատիչ սնկերի 21 շտամ: Նույնականացման նախնական տվյալներով նմուշներից անջատվել են գիշատիչ սնկերի *Arthrobotrys* ցեղի 11 տեսակներ: Սկսվել են աշխատանքներ անջատված սնկերից ԴՆԹ անջատելու, հետազայում մոլեկուլագենետիկական նույնականացում իրականացնելու համար, ինչը թույլ կտա անջատված գիշատիչ սնկերի գենետիկական անձնագիրը տեղակայել միջազգային տվյալների շտեմարաններում: Կատարվել են աշխատանքներ անջատված գիշատիչ սնկերի նեմատոֆագային ակտիվության կառավարման ուղղությամբ: Պարտադիր դասընթացներից հավաքել է 22 կրեդիտ, ընտրովի դասընթացներից՝ 20 կրեդիտ: Տպագրել է 2 հոդված և 1 թեզիս: 2022թ-ին մասնակցել է «Կենսաբանություն» առարկայի 33-րդ միջազգային օլիմպիադային որպես համակարգող:

Կենդանաբանության ամբիոն

1. Երրորդ տարվա հեռակա ուսուցման ասպիրանտ Արմինե Մանվելի Քոսյան (գիտական ղեկավար՝ կ.գ.դ., պրոֆեսոր Ս.Ս. Առաքելյան): Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի բոլոր մարզերից կատարվել է սարդերի հավաք, հավաքագրվել է մոտ 1500 սարդ: Հրատարակվել է մեկ հոդված որտեղ Հայաստանի համար առաջին անգամ նկարագրվել է սարդերի մեկ նոր ցեղ և երկու նոր տեսակ:
2. Չորրորդ տարվա հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Լևոն Արթուրի Հարությունյան (գիտական ղեկավար՝ կ.գ.թ. Ա.Ս. Ղազարյան): Հաշվետու տարում իրականացվել է առաջադրված թեմայի վերաբերյալ տվյալների հավաքագրում, որի ընթացքում միջազգային համագործակցության արդյունքում ստացվել է Գորշ արջի 1900 կետ: Ի հավելումս

աշխարհագրական կոորդինատների, հավաքագրվել են նաև որոշ զենետիկական նմուշներ, կառուցվել են տեսակի տարածվածության մոդելներ (Species distribution models), որոնք իրականացնելու համար 2022 թվականին երկամյա ժամկետով այցելել է Բեռլինի Հումբոլդտի անվան համալսարան՝ վերապատրաստման նպատակով: Ստացված մոդելների հիման վրա նախապատրաստվում է գիտական հոդված:

Գենետիկայի և բջջաբանության ամբիոն

1. Երրորդ տարվա հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Ալիսա Թադևոսի Մանուկյան (գիտական ղեկավար՝ կ.գ.դ., պրոֆ. Ռ.Մ. Հարությունյան): Ա. Մանուկյանն ընդհանուր պատրաստվածության կրթամասից հանձնել է «Գիտաչափություն և գիտական շտեմարաններ», «Հետազոտական էթիկա, մտավոր սեփականության իրավունք և անձնական տվյալների պաշտպանություն», առարկաները: Այս կրթամասից ստացել է 6 կրեդիտ: 2021-2022 ուս. տարվա ընթացքում տպագրվել է 1 հոդված՝ «Physics of Particles and Nuclei Letters» միջազգային հանդեսում և է 1 հոդված «Reports of NAS RA» տեղական ամսագրում: Մասնակցել է «Ultrafast Beams and Applications» գիտական համաժողովին ներկայացնելով պոստեր, նաև մասնակցել է International Doctoral school (The MODEST (Modernization of Doctoral Education in Science and Improvement of Teaching Methodologies), ERASMUS+ and YSU) աշխատանքներին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաշվի առնելով ամբիոնների կարծիքները և հաշվետու ժամանակահատվածում ասպիրանտական պլանով նախատեսված ուսումնական և հետազոտական աշխատանքների կատարումը, աստեստավորել հեռակա ուսուցմամբ ասպիրանտներին և հայցորդին:

Գիտական խորհրդի նախագահ
ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ.



Է.Ս. Գևորգյան

Գիտական խորհրդի քարտուղար
դոցենտ՝

Ի.Վ. Շահազիզյան

12.12.2022թ.